## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/97 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Մեծամոր** **17 հունիսի 2026թ.**

2026թ. հունիսի 08-ից 17-ը ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ էլեկտրական ապրանքների ձեռքբերման նպատակով թիվ ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/97 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Կ. Մովսիսյան՝ | «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ջրամատակարարում» ՀՈԱԿ-ի փականագործ, |
| Լ. Մուրադյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ, |
| Թ. Աբգարյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի առաջատար մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Կ. Մովսիսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Հայրապետյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:

5. Համակարգի միջոցով գեներացված հայտարարություն/ներ/ի և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների եվ հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 08-ին, ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված գնման գինը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | Էլեկտրական արկղ | 2000000 | 09.06.2026 10:00 | 1020000 |
| 2 | Թողարկիչ եռաֆազ 1 | 625000 | 09.06.2026 10:00 | 750000 |
| 3 | Թողարկիչ եռաֆազ 2 | 1612000 | 09.06.2026 10:00 | 1934400 |
| 4 | Թողարկիչ եռաֆազ 3 | 1014000 | 09.06.2026 10:00 | 1216800 |
| 5 | Ավտոմատի անջատիչ 1 | 412750 | 09.06.2026 10:00 | 495300 |
| 6 | Ավտոմատի անջատիչ 2 | 475000 | 09.06.2026 10:00 | 570000 |
| 7 | Ավտոմատի անջատիչ 3 | 312500 | 09.06.2026 10:30 | 375000 |
| 8 | Ժամանակի ռելե 1 | 700000 | 09.06.2026 10:30 | 850000 |
| 9 | Ժամանակի ռելե 2 | 580000 | 09.06.2026 10:30 | 700200 |
| 10 | Ժամանակի ռելե 3 | 390000 | 09.06.2026 10:30 | 468000 |
| 11 | Ռելե ֆազի բացակայության | - | Չկայացած | 204600 |
| 12 | Պղնձյա մալուխ | 3750000 | 09.06.2026 10:30 | 4500000 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև Մասնակից/ներ/ը/.

| Հ/հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «Բի Թու Ջի» ՍՊԸ | ք. Երևան, Նալբանդյան 5, 077035055 | b2gllc.am@gmail.com | 05032652 |
| 2 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | ք. Երևան Վ. Համբարձումյան | ciacangnumner@gm | 00103837 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 91,<br>033242475 | ail.com | |
| 3 | «Սարիբեկ Ադամյան» Ա/Ձ | ԽՈՒԴՅԱԿՈՎ Փ./Շ/70/ 9 ԱՎԱՆ 0060 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ,<br>044994899 | saro_adamyan_97@mail.ru | 26027339 |
| 4 | «Վարդմա» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Ազատության պող., 11Ա, բն. 49,<br>091216066 | vardma.llc@gmail.com | 08263255 |
| 5 | «ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | ք. Երևան, Ավան 3-րդ փողոց 37 տուն,<br>077081188 | karlen4321@mail.ru | 01032965 |
| 6 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | Ք. Երևան, Դավիթ բեկի 180/26,<br>077699551 | h5r.gasparyan@yandex.com | 01096027 |
| 7 | «ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ» Ա/Ձ | ԿԱՍՅԱՆ Փ., Տ 17,<br>094223255 | gnumner2024@mail.ru | 47889417 |

2026թ. հունիսի 09-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ՝ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ.

**«Սարիբեկ Ադամյան» ԱՁ-ի** կողմից 8-9-րդ չափաբաժինների մասով ներկայացված «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» փաստաթղթերում «ֆիրմային անվանումը», «ապրանքային նշանը», «մակնիշը», «արտադրողի անվանումը» և «տեխնիկական բնութագիրը» դաշտերում լրացված է համապատասխան չափաբաժինների անվանումները, որը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, և անհրաժեշտ է հստակեցնել վերոնշյալ դաշտերը:

**«Բի Թի Ջի» ՍՊԸ-ի** կողմից 2-րդ, 4-6-րդ չափաբաժինների մասով չափաբաժինների մասով ներկայացված «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» փաստաթղթերում անհրաժեշտ է հստակեցնել ապրանքային նշանի և մակնիշի վերաբերյալ տեղեկատվությունը:

**«Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի** կողմից 3-րդ, 7-րդ չափաբաժինների մասով չափաբաժինների մասով ներկայացված «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» փաստաթղթերում անհրաժեշտ է հստակեցնել ապրանքային նշանի և մակնիշի վերաբերյալ տեղեկատվությունը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 09-ին Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած Մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և Մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Հ/Հ | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ /լրացվում է հայտերի գնահատման վերջնարդյունքում/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
| 1 | 1 | «ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 1020000 | 2000000 | 20% | 2400000 | 2000000 | 20% | 2400000 | **Գնման գնի գերազանցում** |
| 1 | 2 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 1020000 | 9854000 | 20% | 11824800 | 9854000 | 20% | 11824800 | **Գնման գնի գերազանցում** |
| 1 | 3 | «ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ» Ա/Ձ | 1020000 | 100000000 | 20% | 120000000 | 100000000 | 20% | 120000000 | **Գնման գնի գերազանցում** |
| 2 | 1 | «ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ | 750000 | 750000 | 20% | 900000 | 392000 | 20% | 470400 | X |
| 2 | 2 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | 750000 | 625000 | 20% | 750000 | 500000 | 20% | 600000 | |
| 2 | 3 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 750000 | 9854000 | 20% | 11824800 | 9854000 | 20% | 11824800 | **Գնման գնի գերազանցում** |
| 3 | 1 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | 1934400 | 1612000 | 20% | 1934400 | 1358000 | 20% | 1629600 | X |
| 3 | 2 | «ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ | 1934400 | 1934400 | 20% | 2321280 | 1383880 | 20% | 1660656 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 3 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 1934400 | 9854000 | 20% | 11824800 | 9854000 | 20% | 11824800 | **Գնման գնի գերազանցում** |
| 4 | 1 | «ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ | 1216800 | 1216800 | 20% | 1460160 | 742000 | 20% | 890400 | X |
| 4 | 2 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | 1216800 | 1014000 | 20% | 1216800 | 850000 | 20% | 1020000 | |
| 4 | 3 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 1216800 | 9854000 | 20% | 11824800 | 9854000 | 20% | 11824800 | **Գնման գնի գերազանցում** |
| 5 | 1 | «ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ | 495300 | 495300 | 20% | 594360 | 240000 | 20% | 288000 | X |
| 5 | 2 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | 495300 | 412750 | 20% | 495300 | 325000 | 20% | 390000 | |
| 5 | 3 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 495300 | 9854000 | 20% | 11824800 | 9854000 | 20% | 11824800 | **Գնման գնի գերազանցում** |
| 6 | 1 | «ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ | 570000 | 570000 | 20% | 684000 | 298000 | 20% | 357600 | X |
| 6 | 2 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | 570000 | 475000 | 20% | 570000 | 375000 | 20% | 450000 | |
| 6 | 3 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 570000 | 9854000 | 20% | 11824800 | 9854000 | 20% | 11824800 | **Գնման գնի գերազանցում** |
| 7 | 1 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | 375000 | 312500 | 20% | 375000 | 278675 | 20% | 334410 | X |
| 7 | 2 | «ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ | 375000 | 375000 | 20% | 450000 | 281800 | 20% | 338160 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 3 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 375000 | 9854000 | 20% | 11824800 | 9854000 | 20% | 11824800 | Գնման գնի գերազանցում |
| 8 | 1 | «Սարիբեկ Ադամյան» Ա/Ձ | 850000 | 700000 | 20% | 840000 | 700000 | 20% | 840000 | X |
| 8 | 2 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 850000 | 9854000 | 20% | 11824800 | 9854000 | 20% | 11824800 | Գնման գնի գերազանցում |
| 9 | 1 | «Սարիբեկ Ադամյան» Ա/Ձ | 700200 | 580000 | 20% | 696000 | 580000 | 20% | 696000 | X |
| 9 | 2 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 700200 | 9854000 | 20% | 11824800 | 9854000 | 20% | 11824800 | Գնման գնի գերազանցում |
| 10 | 1 | «Բի Թի Ջի» ՍՊԸ | 468000 | 468000 | 20% | 561600 | 245000 | 20% | 294000 | X |
| 10 | 2 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | 468000 | 390000 | 20% | 468000 | 277000 | 20% | 332400 | |
| 10 | 3 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 468000 | 9854000 | 20% | 11824800 | 9854000 | 20% | 11824800 | Գնման գնի գերազանցում |
| 12 | 1 | «Վարդմա» ՍՊԸ | 4500000 | 3750000 | 20% | 4500000 | 3712500 | 20% | 4455000 | X |
| 12 | 2 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | 4500000 | 3750000 | 20% | 4500000 | 3750000 | 20% | 4500000 | |
| 12 | 3 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 4500000 | 9854000 | 20% | 11824800 | 9854000 | 20% | 11824800 | Գնման գնի գերազանցում |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026թ. հունիսի 10-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.

2. Ընթացակարգը՝ 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները:

3. Ընթացակարգը՝ 11-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները:

4. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2026թ. հունիսի 12-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2026թ. հունիսի 17-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.

2. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 2-րդ, 4-6-րդ, 10-րդ | «Բի Թի Ջի» ՍՊԸ | բավարար |
| 3-րդ, 7-րդ | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | բավարար |
| 8-9-րդ | «Սարիբեկ Աղամյան» Ա/Ձ | բավարար |
| 12-րդ | «Վարդմա» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոնշյալը, 2026թ. հունիսի 17-ին Հանձնաժողովը որոշեց, Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին ճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած

Մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին համակարգի

միջոցով ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Կ. Մովսիսյան ____________

*Հանձնաժողովի անդամ՝*

Լ. Մուրադյան ____________

Թ. Աբգարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյան ____________